

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2021 թվականի N –Ա

**ԴԱՎԻԹ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ
ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատել Դավիթ Տիգրանի Սահակյանին (ծնվ.՝ 12.01.1995 թ., հաշվառման հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, Արտաշատ, Ս. Հակոբյան 74):

Հայաստանի Հանրապետության

Վարչապետի պաշտոնակատար

Նիկոլ Փաշինյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ԴԱՎԻԹ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ
ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Դավիթ Տիգրանի Սահակյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրա գիտական գործունեության ընթացքում ձեռք բերված գիտելիքների ընդլայնմանը և նոր գիտելիքների ստացմանն ու կիրառմանն ուղղված մտավոր ստեղծագործական գործունեությունը շարունակելու հնարավորության ընձեռնմանը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

ՀՀ քաղաքացի Դավիթ Տիգրանի Սահակյանը (ծնվ.՝ 12.01.1995 թ., հաշվառման հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, Արտաշատ, Ս. Հակոբյան 74) 2010-2014 թթ. ուսանել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության բաժնի բակալավրիատում: Այնուհետև, գերազանցությամբ ավարտելով համալսարանը, ՀՀ ԿԳՆ միջպետական կրթական ծրագրով ուսումը շարունակել է Վրաստանի Իվանե Զավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետի կովկասագիտության բաժնի մագիստրատուրայում և ավարտել՝ ստանալով կարմիր դիպլոմ: Մագիստրատուրայում ուսանելու տարիներին մասնակցել է նաև եվրոպական մի շարք վերապատրաստման դասընթացների՝ կազմակերպված Եվրոպական խորհրդի և «Erasmus+» - ի կողմից:

Մագիստրատուրան ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների նախարարության միջև կրթության, գիտության և տեխնոլոգիաների բնագավառներում համագործակցության ծրագրի շրջանակներում 2016 թ. գործուղվել է Հորդանան՝ ասպիրանտական կրթություն ստանալու նպատակով: 2020 թ. դեկտեմբերի 17-ին Հորդանանի Մուֆայի համալսարանում արաբերենով հաջողությամբ պաշտպանել է ասպրանտական ատենախոսությունը «Մերձավոր Արևելքի (Լևանտի) հայ համայնքները 1878-1918 թթ.» թեմայով և արդեն 2021 թ. փետրվարի 10-ին Հորդանանի Մուֆայի համալսարանից ստացել պատմական գիտությունների թեկնածուի (PhD) աստիճան: Այնուհետև դիպլոմը ներկայացվել է ՀՀ

Բարձրագույն որակավորման կոմիտե, որն էլ 05/04/2021 թ. այն համապատասխանեցրել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճանին:

Ասպիրանտուրայում ուսանելու ընթացքում տպագրել է 2 հոդված. մեկը՝ անգլերեն, մյուսը՝ արաբերեն: Անգլերեն հոդվածը՝ «Սիրիայի, Լիբանանի և Երուսաղեմի հայկական համայնքների ձևավորումը. հին ժամանակներից մինչև 19-րդ դար» վերնագրով, տպագրվել է «Scopus» - ի ցանկի գիտական ամսագրերից մեկում:

Հորդանանում ավարտելով ուսումը՝ Դավիթ Սահակյանը վերադարձել է Հայաստան և այժմ աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արևելյան աղբյուրագիտության և պատմագրության բաժնում և զբաղվում է «Մերձավոր Արևելքի հայկական համայնքները միջնադարյան արաբական աղբյուրներում» թեմայով գիտական հետազոտությամբ: Այս հետազոտությունը կենտրոնանում է Մերձավոր Արևելքում հայկական համայնքների ձևավորման պատմության, տեղի արաբա-մուսուլմանական բնակչության հետ հայերի սոցիալ-տնտեսական և մշակութային կապերի, դրանց մասին արաբալեզու աղբյուրներում վկայությունների վրա, և կարևոր նշանակություն ունի ՀՀ և մերձավորարևելյան արաբական երկրների միջև հարաբերությունների հետագա խորացման և զարգացման համար: Հետազոտությունը կատարելուն զգալիորեն նպաստում է նրա կողմից արաբերենի գերազանց տիրապետումը, ասպիրանտուրայում ուսանելու տարիներին ստացած գիտական ուսումնասիրություն կատարելու փորձը և արաբական երկրների, հատկապես՝ Հորդանանի համալսարաններում և գիտահետազոտական կենտրոններում ունեցած իր կապերը:

Ակնկալվող արդյունքը.

«Դավիթ Տիգրանի Սահակյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի Դ. Սահակյանին մասնագիտական և հետազոտական գործունեությունը շարունակելու և գիտության մեջ իր ներդրումը ունենալուն:

«Դավիթ Տիգրանի Սահակյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ԴԱՎԻԹ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ
ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ

1. ՀՀ արդարադատության նախարարություն		28.07.2021
		/27.3/22885-2021
1. Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է	